ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2019թ. թիվ 27/26-3/1731-19 գրությամբ Արմեն Քրդոյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 05.02.2019թ. գրության հիման վրա, 07.02.2019թ. թիվ 27/26-3/1731-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Արմեն Քրդոյան Ա/Ձ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Արմեն Քրդոյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Արմեն Քրդոյան Ա/Ձ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 14.02.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. **<u>«Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը.</u>**

«Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.02.2019թ. գրությամբ հայտնել է, որ «Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 16.01.2019թ. հրապարակված «ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/0» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել սույն թվականի հունվարի 24-ին և գնահատող հանձնաժողովի որոշմամբ Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն 2, 5, 6, 11, 15, 20, 21, 23, 26, 29, 33-36, 39-41, 43-45, 47-50, 54 և 55 չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 25.01.2019թ. ծանուցում է ուղարկվել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը՝ կից իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 6.1/:

Պատվիրատուն հայտնել է, որ սահմանված ժամկետում վերջինս չի ներկայացրել համապատասխան որակավորման փաստաթղթեր, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ նախապատվություն է տրվել որպեսզի որակավորման փաստաթղթեր ներկայացնեն հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 14.02.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2019/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2, 5, 6, 11, 15, 20, 21, 23, 26, 29, 33-36, 39-41, 43-45, 47-50, 54 և 55 չափաբաժինների մասով Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 25.01.2019թ. սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 6.1/:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է Արմեն Քրդոյան Ա/Ձ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ վերջինս չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2019թ. թիվ 27/26-3/1731-19 գրությունը, «Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 05.02.2019թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության

համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով ***սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն:

Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2, 5, 6, 11, 15, 20, 21, 23, 26, 29, 33-36, 39-41, 43-45, 47-50, 54 և 55 չափաբաժինների մասով Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 25.01.2019թ. սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 6.1/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է Արմեն Քրդոյան Ա/Ձ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ վերջինս չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել*** որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ***ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:*** Սույն մասով ***սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ***ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.12-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

Գտնում եմ, որ Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն «ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ վերջինս հայտի թիվ 4 հավելվածով պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՇՄԱՐՓՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), սակայն Արմեն Քրդոյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2019թ. թիվ 27/26-3/1731-19 գրությամբ Արմեն Քրդոյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Արմեն Քրդոյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**